

ՀՆՋԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Մայիս 15ին Առաջնորդարան այցելեցին Հնչակեան Կուսակցության Մասիս Շաբաթաթերթի Խմբագիրները՝ Տոբթ. Արշակ Գազանճեան եւ Տիար Գաբրիէլ Մոլոյեան եւ իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին Առաջնորդ Սրբազան Հօր՝ 82րդ Թեմական Պարգամաւորական Ժողովի կողմէ յառաջիկայ տարուան Մայիսէն սկսեալ եօթնամեայ Առաջնորդական պաշտօնավարութեան նոր շրջանի կապակցութեամբ: Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնները յայտնեց այս այցելութեան համար եւ հաստատեց, որ նոր խանդավառութեամբ պիտի շարունակէր իր հոգեւոր ծառայութիւնը՝ Արեւմտեան Թեմի առաւել պայծառութեան համար: